Օրվա դասի պլան / Բաց դաս /

23 - 03 - 2023թ.

Առարկա - Մայրենի

Դասարան - 2-րդ

Դասի թեման - Բառակազմություն

Նպատակը - Ճանաչել բառը որպես պատկերավորման միջոց,վերլուծել բառի բաղադրիչները, խոսքի մեջ առանձնացնել պարզ, բարդ և ածանցավոր բառերը: Արժևորել մայրենի լեզվի դերը , զարգացնել կամային որակներ , հարստացնել բառապաշարը, ամրակայել հաղորդակցական և համագործակցային կարողությունները:

Ուսուցիչ	Սովորողներ
Հարցերի օգնությամբ ամրապնդում է բառի ՝ որպես պատկերավորման միջոց սովորողների նախնական գիտելիքները: Հնչյունաբանական աշխատանքի միջոցով ամրապնդում այն հիմնական միտքը , որ հնչյունների խումբը պետք է իմաստ արտահայտի և այդ դեպքում այն կդառնա բառ(օրինակ՝ << նշու>> հնչյունների խումբը բառ չի կարող լինել , որովհետև իմաստ չի արտահայտում, իսկ շուն կամ նուշ հնչյունների խումբը իմաստ ունի):	Սովորողները հարցերի օգնությամբ վերհիշեցին , թե ինչ է բառը: Կատարեցին հնչյունաբանական աշխատանք, վերլուծեցին հնչյունների խումբը , կատարեցին տարբեր հնչյունների տեղափոխություններ և կազմեցին բառեր: Գրատախտակի մոտ կատարեցին բառերի հնչյունների վերլուծական աշխատանք և համոզվեցին , որ հնչյունների խումբը պետք է իմաստ արտահայտի, որպեսզի այն բառ կոչվի:
Առաջարկեց փուչիկների վրա ամրացված բառափնջերից առանձնացնել պարզ, բարդ և ածանցավոր բառերը , ընթացքում հետևում սովորողների խմբային	Սովորողները մեծ ուրախությամբ վերցրեցին փուչիկները , կպչուն բառերով կատարեցին բառակազմական աշխատանքը: Ձևակերպեցին բառերի

աշխատանքին, միմյանց հետ համագործակցությանը: Աշխատանքի ընթացքում շտկում է սխալները, ուղղություն տալիս ճիշտ կողմնորոշվելու համար:	տեսակներն ըստ կազմության սահմանումները, անվանեցին հայերենի բոլոր նախածանցները, մի քանի վերջածանցներ, բերեցին օրինակներ: Հոդակապով և անհոդակապ բարդ բառերի օրինակներ բերեցին , ապա սկսեցին խմբավորել պարզ, բարդ և ածանցավոր բառերը:
Մինչ հաջորդ առաջադրանքի կատարումը, առաջարկեց կատարել ֆիզկուլտ դադարի համալիր վարժություններ: Հաջորդ բառային աշխատանքը նախածանցավոր և վերջածանցավոր բառերի տեղադրումն էր ամպիկների վրա: Աշխատանքը կատարվում էր բառի արմատի և ածանցի վերլուծությամբ:	Համագործակցելիս պահպանում էին բարեվարքության և խմբային աշխատանքի սահմանված կանոնները, հաղորդակցվելիս պահպանում էին ուղղախոսական կանոնները: Ճանաչում էին նախածանցավոր և վերջածանցավոր բառերը, ամրացնում համապատասխան ամպիկների մեջ , բաժանում էին բաղադրիչների՝ արմատ և ածանց:

Որպես ամփոփիչ առաջադրանք առաջարկեց հոդակապով և անհոդակապ բառերով կազմել նախադասություններ, ապա նաև օգտագործել ածանցավոր բառեր : Ուշադրություն էր դարձնում մայրենի լեզվի արժևորմանը: Որպես ամրապնդման առաջադրանք հանձնարարեց կատարել Learning Apps - ի իր պատրաստած առաջադրանքը ՝ պարզ, բարդ, ածանցավոր բառերի խմբավորման վերաբերյալ: https://learningapps.org/display?v=pjcgnnf5c23	Կազմեցին նախադասություններ օգտագործելով իրենց բերած օրինակները ՝ ածանցավոր ,հոդակապով և անհոդակապ բարդ բառերով:Ընթացքում կատարում էին բաղադրիչների վերլուծություն, ձևակերպում իրեն հետաքրքրող հարցեր: Սիրով աշխատեցին ՏՀՏ առաջադրանքը, ընթացքում հետևում, պահպանում էին առաջադրանքի կատարման կանոններին: Խմբավորեցին բառերն ըստ կազմության՝ որոշեցին բաղադրիչները:

ԿԵՆԴԱՆԻՆԵՐ
ԲՈՒՅՍԻ ՄԱՍԵՐԸ